ԲԱՐԵՄԱՂԹԱՆՔՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Օգոստոսի 24-ին, երեկոյան, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության Ազգային Ժողովի պատվիրակությունը՝ ԱԺ նախագահ Խոսրով Հարությունյանի գլխավորությամբ՝ չորս ամիսների բացակայությունց հետո բարի վերադարձ մաղթելու Ամենայն Հայոց Գարեգին Ա Կաթողիկոսին:

Պարոն Հարությունյանը նշեց, որ չորս ամիսների ընթացքում իրավամբ զգացվում էր Վեհափառ Հայրապետի բացակայությունը:

«Չեմ կարող երևակայել մի շրջան, որ Հայոց Կաթողիկոսը չլինի Ամենայն Հայոց Կաթողիկոս», - ասաց Վեհափառ Հայրապետը, ընդգծելով, որ Հայ Առաքելական Եկեղեցին միշտ եղել է հայոց պետականության կողքին և կարևոր դեր ունեցել հայ ժողովրդի պատմության մեջ:

Խոսելով նույն օրը սկսված Գերագույն Հոգևոր Խորհրդի նիստի աշխատանքների մասին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ քննարկվելիք թեմաներից մեկը Եկեղեցի-պետություն հարաբերություններն են, որոնք դեռևս հստակեցման կարիք ունեն:

Պարոն Հարությունյանը վստահեցրեց, որ Ազգային Ժողովը պատրաստ է համագործակցել Եկեղեցու հետ:

Միաժամանակ Խոսրով Հարությունյանը հույս հայտնեց, որ առաջիկա ԱԺ ընտրությունների նախաշեմին Ամենայն Հայոց Կաթողիկոսի հոգևոր խոսքն ու հայրապետական խորհուրդները կնպաստեն ԱԺ-ի աշխատանքներին:

Հանդիպման ընթացքում Վեհափառ Հայրապետը հյուրերին պատմեց նաև Միացյալ Նահանգներ կատարած իր այցի, ամերիկահայոց թեմի 100-ամյակի տոնակատարությունների, ԱՄՆ-ում ունեցած իր հանդիպումների, սփյուռքահայ համայնքի, վերջինիս հնարավորությունների ու կարողությունների մասին:

Հանդիպմանը ներկա էին Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները:

***

Օգոստոսի 28-ին, առավոտյան ժամը 10-ին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին այցելեց Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար Վարդան Օսկանյանը՝ Նորին Սուրբ Օծություն Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսին հայտնելու իր բարեմաղթանքներն ապաքինման առիթով:

Հանդիպման ընթացքում շեշտվեց Հայաստանյայց Եկեղեցու և պետության միջեկեղեցական և ազգային-հասարակական բնագավառներում համագործակցության կարևորությունը:

Նույն օրը, ժամը 11-ին, Վեհափառ Հայրապետին բարի վերադարձ մաղթելու համար Մայր Աթոռ այցելեցին ՀՀ Պաշտպանության նախարար Վազգեն Սարգսյանը և ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար, օպերատիվ հարցերով նախարար Շահեն Կարամանուկյանը:

Զրույցի ընթացքում հիմնականում խոսվեց բանակում Հայ Եկեղեցու հոգևոր առաքելության մասին: Վեհափառ Հայրապետը հավաստիացրեց պաշտպանության նախարարին, որ զորամասեր այցելելու նպատակով բանակի հոգևոր խորհրդականի կողքին կնշանակվեն նոր հոգևորականներ:

ՄԱՄԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ